«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ
ԱՌԱՐԿԱ	Կենսաբանություն
ՀԵՂԻՆԱԿ	Մանուշ Զավենի Անտոնյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մ.Մելքոնյանի անվան հ.11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Գլուխ.1 ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1.1 Անհատականություն և անձի ձևավորում _____ 4

1.2 Անձի զարգացումը _____ 5

Գլուխ. 2 Միջավայրի դերը անձնավորության զարգացման գործընթացում

2.1 Սոցիալական միջավայր _____ 9

Գլուխ 3 Ընտանիքի և դպրոցի դերը անձի ձևավորման գործում

3.1 Ընտանիքի դերը անձի ձևավորման գործում _____ 12

3.2 Դպրոցի դերը անձի ձևավորման գործում _____ 12

Գլուխ 4 Դաստիարակության դերը անձնավորության ձևավորման ու զարգացման գործում _____ 13

4.1 Գործնեության և ակտիվության դերը անհատի զարգացման, սոցիալականացման գործընթացում:_____ 15

Եզրակացություն _____16

Օգտագործված գրականություն_____17

Ներածություն

Մարդուն ճանաչելու համար պետք է նրան սիրել:

-Լ. Ֆոյերբախ

Մարդը ծնվում է որպես կենսաբանական էակ, որպես անհատ: Հոմանիշների բառարանում «մարդ» բառը բացատրվում է հետևյալ կերպ: Մարդ-այր, տղամարդ, մահկանացու, ասամորդի, երկրավոր, հողածին մարդ արարած: «Մարդ» հասակացությունը միավորում է տվյալ տեսակին հատուկ բնական և սոցիալական հատկանիշներ և ելակետային է համարվում թե գիտության համար և թե գործնականում: **Մարդը հասարակական էակ է , օժտված գիտակցությամբ, նա իր մեջ մարմնավորում է կյանքի զարգացման բարձրագույն մակարդակ և համարվում է հասարակական-պատմական գործնեության սուբյեկտ:**

Հետազոտության թեմայի արդիականությունը : Անհատի ձևավորումը ուսումնական գործընթացում օրապահանջ է: Այս գործընթացը իրականացվում է բոլոր ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է անհատի լիարժեք ու համակողմանի զարգացած անձնավորության ձևավորումը:

Գլուխ.1 ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հասկացությունը իր մեջ ներառում է այն ընդհանուրը և եզակին, ինչով մի մարդը տարբերվում է մյուսից, որն էլ նրանց հաղորդում է յուրահատուկ հմայք, անկրկնելիություն:

Անհատը անձնավորություն է դառնում ապրելով հասարակության եջ, անցնելով անհատական կյանքի օնթոգենեզ և սոցիալականացման բարդ և երկարատև ճանապարհ, ենթարկվելով տարիքային և անհատական հոգեբանական փոփոխությունների: Անձնավորությունը այն անատն է, որն ունի գիտակցություն և ինքնագիտակցություն, որոշակի դերեր և դիրք հասարակության մեջ: Կարծում ենք, որ անձի նման բնորոշումը թերի է, մասամբ է միայն արտահայտում «անձնավորություն» հասկացության բուն բովանդակությունը: Անձնավորության բազմաթիվ բնորոշումները քննարկելով և վերլուծելով՝ պրոֆ. Հ Մախչանյանը տալիս է հետևյալ ընդհանրացնող բնորոշումը. «Անձը, անձնավորությունը սոցիալականացված անհնատն է իր կազմա-բնախոսական հոգևոր-բարոյական և գիտակցական բոլոր հատկանիշներով, իր վարքագծով ու գործնեությամբ, մարդկանց հտ ուեցած բազմաբնույթ հարաբերություններով, սոցիալական դերերով և քաղաքացոու որակներով:

Հոգեբանությունը անձի զարգացուը բնութագրում է որպես արտաքին ու ներքին, կառավորվող և չկառաարվող գործոնների ազդեցության արդյունք:»

Այլ կերպ զարգացումը կարելի է բնորոշել որպես մարդուն ներհատուկ բնածին նախադրյալների իրացում ու իկատարելագործում, քանակական և որակական փոփոխությունների միագումար, որի արդյունքում մարդըբնական, կենսաբանական էակից փոխակերպվում է հասարակական էակի:

Հիրավի, որպեսզի անհատը անձ դառնա, պետք է ունենա ֆիզիկական, բնախոսական, սոցիալական, մտավոր, բարոյական, գեղագիտական զարգացման որոշակի աստիճան:

Որպես կենսաբանական էակ օժտված լինելով մարդուն ներհատուկ նախադրյալներով՝ անհատն աստիճանաբար սոցիալական միջավայրում փոխակերպվում է հասարակական էակի, սոցիալականանում է:

Սոցիալականացումը անհատի կողմից ողջ կյանքի ընթացքում հասարակության կողմից կոտակած սոցիալական փորձի, վարքի նորմաների, մշակութային արժեքների համակարգի յուրացումն է: Անձն իր զարգացման գործընթացում շջվելով շրջապատի մարդկանց հետ ակտիվանում է դրսևորելով թե բնութունից իրեն շնորհված հնարավորությունները և թե կյանքում դաստիարակության և սոցիալական այլ գործոնների շնորհիվ ձեռք բերածը:

Երեխայի զարգացման մասին խոսելիս առաջին հերթին պետք է նշել նրա ֆիզիկական աճն ու հասունացումը, օրգանիզմի աստիճանական զարգացումը: Առավել բարդ գործընթաց է անձի բնախոսական և հոգեկան գործընթացների զարգացումն ու կատարելագործուը, հայացքների, համոզմունքների համակարգի(աշխարհայացք) և հոգեկան այլևայլ որակների ձևավորումը:

Մարդու կենսաբանական ու սոցիալական հասունացման որոշակի աստիճանում՝ դեռահասության շրջանում (աղջիկների մոտ մոտավորապես 11-12 տարեկանում, տղաների մոտ 13-14 տարեկանում) սկսվում է նաև սեռային հասունացումը: Դեռահաս տարիքում տղաները և աղջիկները դրսևորում են յուրաքանչյուրը իր սեռին բնորոշ (սեռային դիմորֆիզմով (դի-երկու, մորֆ-ձև, երկու իրարից կտրուկ տարբերակմամբ պայմանավորված) ֆիզիկական և հոգեբանական հատկանիշներ, սեռային երանգավորում ունեցող ապրումներ և համապատասխան վարքագիծ: Անհատն աստիճանաբար է ձևավորվում որպեսս աննձնավորություն: Թե անձը և թե նրա ձևավորումը երկուսն էլ մարդու սոցիալական բնութագրի արտահայտո�ությունն են: Անձև ձևավորվում է, ասել է թե՛ կտարելագործվում է նպատակաուղղված և ծրագրված դաստիարակության ազդեցության տակ: Անձի ձևավորումը նրա զարգացմա գործընթացի հարաբերական ավարտուն ասըիճանի արտահայտությունն է: Անձի ձևավորմա գործու իր եդրն ունի նաև տվյալ հասարակական կարգը իրեն ներհատուկ վերնաշենքային երևույթներով (իր քաղաքական , իրավական, կրոնական, բարոյա-հոգեբանական և այլ արժեհամակարգերով), որոնք էլ աստիճանաբար կերտում են անձնավորության քաղաքացիական, կրոնա-բարոյական, էթնո-հոգեբանական և ընդհանրապես մարդկային նկարագիրն ու ու հոգեկերտվածքը:

1.1 Անձի զարգացումը:

Անձնավորության զարգացումը տեղի է ունենում հետևյալ գործոնների ազդեցության տակ՝

- Բնական, կենսաբանական գործոն, գենոտիպ (գեն-հուն.-ծնվող)
- Սոցիալական գործոն:

Բնական, ժառանգական գործոնը.
ա) ժառանգաբար փոխանցվող հատկանիշներն են՝
բ) կյանքի բնական պայմանները (աշխարհագրական միջավայրը):

❖ Ժառանգական գործոն: Ժառանգականությունը նախնիներից (մինչև յոթ սերունդ) երեխաներին փոխանցվող այն հատկություններն են, որոնք ներդրված են անհատի

գենետիկ ծրագրում: Գենետիկայի տվյալներն ասում են, որ օրգանիզմի հատկանիշները ծածկագրված են յուրօրինակ գենետիկական կոդու, կա նաև ցեղային, տոհմային ժառանգականություն, որը այլ բան չէ, քան ազգային, էթնիկ հատկանիշների բնորոշ լինելը նույն ցեղին, ազգին (հային, վրացու, այլոց) պատկանող անհատներին:

Ժառանգականութունը բնութագրվում է որպես օրգանիզմի բնական (կենսաբանական) հատկությունների ամբողջություն, որը փոխանցվում է սերնդից սերունդ: Մեկ այլ տեսակետ՝ ժառանգականությունը (կենդանի օրգանիզմ՝ իր նանին վերարտադրելու հատկությունն է մի քանի սորունդնորի ընթացքում):

Կենսաբանական ժառանգականությունը հսկայական նշանակություն ունի մարդու կյանքում, դա պահպանում է մարդուն որպես բնական էակորպես հազվագյուտ տեսակ բնության մեջ:

Ըստ Ի.Պ.Պավլովի՝ կենսաբանական էվոլյուցիան մարդուն տվեց այնպիսի մարդկային արտացոլման ձևեր, որոնք անցումային էին վայրենությունից՝մարդկայինին, ինչպես ուղղահայացք կեվածքը, հոդաբաշխ խոսքը, նմատակասլաց աշխատելու հատկությունը և այլն:

Ժառանգաբար փոխանվում են՝

- Մորֆոլոգիական գծերը, ֆիզիկական հատկանիշները՝ գույնը, ձևը, հասակը և այլն:
- Արյան խումբը, ռեզուս գործոնը
- Որոշ հիվանդություններ (շաքարախտ, հոգեկան հիավնդություն և այլն)
- Ռասսայական գծերը, հատկանիշները (նեգրոիդից ծնվում է նեգր)
- Համամարդկային նախադրյալները՝մտածողության օրգանը, նյարդային համակարգը, զգայարաերը դդրանց յուրհատկությունները (դալտոնիզմ, կարճատեսություն, խլություն և այլն)

Ժառանգաբար փոխանցվում են նաև արվեստի որևէ տեսակի ուությամբ ընդունակությունները: Երբեմն առանձին տոհմեր մի քանի սերունդ փոխանցում են արվեստի որևէ տեսակի օժտվածությունը: Հայտնի է, որ Հովնաթանյանների ընտանիքը տվել է մի քանի սերնդի նկարիչներ: Յոհան Ս. Բախի ընտանիքում եղել է 57 մասնգաետ երաժիշտ, որոնցից 20-ը ականավոր, Վ.Ա. Մոցարտի գերդաստանում հաշվվում է 56 երաժիշտ:

Այստեղ հիմնական պատճառը ոչ միայն կենսաբանական ժառանգակաությունն է , այլև ընտանիքում տվյալ ընդունակության զարգացմանը նպաստող պայմանների հարատևումը սերնդե սերունդ:

Միաժամանակ մանկավարժագիտության համար կարևոր է նաև պարզել, թե երեխաները ժառանգում են պատրաստի ըդունակություներ որոշակի գործեությաան տեսակի, թե ժառանգում են ընդունակությունները պայմանավորող նախադրյալները:

Փորձարարական հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժառանգվում են ոչ թե ընդունակությունները, այլ դրանց նախադրյալները, իսկ ժառանգվածը հետագայում կիրացվի թե ոչ, կախված կլինի կյանքի պայմաններից, անհատի ձգտումներից, ցանկություններից, ինչպես նաև հասարակական պահանջարկից և ակլն:
Գենետիկայի վերջին նվաճումները ցույց են տալիս , որ ժառանգականությունը կարելի է կառավարել: Գենային ճարտարապետությունը (ինժեներիան) արդի ժամանակներում միջամտում է գենի կառուցվծքին, բուժում է հիվանդ գենը, վերացնում է արատը սաղմի օրգանիզմում և այլն:

Գենետիկան հաստատում է, որ մարդու կամ կենդանու գենետիկ ծրագիրը երդրված է (ծածկադրված է) ԴՆԹ-ի մոլեկուլյար կառուցվածքում, որն ապահովում է օրգանիզմի կառուցվածքների (տրված պարամետրերով) աշխատանքը:
Ըստ ռուս և ամերիկյան գենետիկների հետազոտությունների, պարզվում է, որ կառավարելով նոր բջիջների աճը, քրոմոսոմների զարգացումը դրանով ուղղակիորեն կարելի է կառավարել նոր բջիջների աճը և ապահովել օրգանիզզմի կյանքի սահմանափակ տևողությունը (կլոնավորումը): Կա նաև հակառակ երևույթը՝ մարդու օրգանիզմը արտաքին ներգործություններից պաշտպանված չէ, ժառանգականության գենային ապարատը նույնպես: Ժառանգական ապարատի վրա ազդեցությունը կանխորոշում է գենետիկ կոդերի և օրգանիզմի գենետիկ հիշողության ոչնչացումը՝ կրճատելով կյանքի տևողությունը և հանգեցելով անշրջելի գենային փոփոխությունների (մուտացիաների): «Այդպիսի ազդակ կարող է լինել ատոմային ճառագայթումը (ռադիացիան): Ազդելով մարդու կամ կենդանու գենետիկ ապարատի վրա (քրոմոսոմների) դեռևս սաղմի ներարգանդային զարգացման ընթացքում խախտվում է ԴՆԹ-ի կառուցվածքը, պատճառ դառնալով սաղմի ժառանգական հիվանդության, ծնվում են անսովոր երեխաներ երկու գլխով. Երկու մարմնով սերտաճած (սիամական երկվորյակներ), ծնվում են նաև հսկայական գլխով երեխաներ: « Գենային կառուցվածքի աղավաղումներ են առաջնում նաև աշխատանքի կամ կենցաղի ծանր պայմաններից (նյարդա-հոգեկան խանգարում, կենցաղային թունավորում ալկոհոլի, թմրանյութերի ազդեցության տակ, ձայնային գերբեռնում և այլն)»:
Ժառանգականությունն իր դերը ունենալով հանդերձ չի կանխորոշում մարդու ճակատագիրը: Ժառանգաբար չեն փոխանցվում մարդուն բնութագրողդ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գիտելիքները,, համոզմունքները, աշխարհայացքը, բնավորությունը, բարոյական հատկությունևեը, ճաշակը: Թոև այստե էլ վիճելի հանգամանք կա, քանի որ այժմ որոշ գիտնականներ, զգուշավորությամբ (ակադեմիկոսներ Պ.Ն Անոխին, Ն.Մ Ամոսով և այլք) սսկզբում քողարկված ձևով, իսկ վերջերս ավելի բացահայտ կարծիք են հայտնում մարդու բարոյականության և սոցիալական վարքի ժառանգական պայմանավորվածության մասին: Մարդը որպես կենսաբանական տեսակ իր զարգացման ընթացքում շատ քիչ է փոփոխության

ենթարկվել, որն էլ ծանրակշիռ ապացույց է մարդկային բնույթի անփոփոխ լինելու մասին:

Մարդկային տեսակի փոփոխությունը կապված կլինի այն բանի հետ, թե արդյոք գիտնականները գործնականորե միջոց կգտնեն միջամտելու գենային ծրագրին (կոդին), իսկ թե արդյոք դա ինչ հետևանքների կահնգեցնի, դժվար է կանխատեսել:

Անձի զարգացումը տեղի է ունենում նաև սոցիալական գործոնի ազդդեցության շնորհիվ, որն իր մեջ ներառում է `

- Կյանքի պայմանները (միկրո և մակրո միջավայր)
- Մարդու գործնեությունը
- Դաստիարակությունը որպես կազմակերպված երևույթ

Գլուխ. 2 Միջավայրի դերը անձնավորության զարգացման գործընթացում

2.1 Սոցիալական միջավայր

Մանկավարժագիտությունը և հոգեբանությունը հաստատում են, որ անձի զարգացումը, հոգեբանական և բնախոսական բոլոր հատկությունները ձեռք են բերվում նրա աճի և կեսագործնեության ընթացքում, հաղորդակցվելիս: Շվեյցարիայի հոգեբան Ժան Պիաժեն երեխայի զարգացումը բնութագրում է որպես ընդհանրական գործընթաց, որը պետք է դիտարկել կենսաբանական և հոգեբանական համատեքստում: Երեխայի զարգացուը Ժ.Պիաժեն կապում է ճանաչողության ամբողջ համակարգի հետ: Ծնվելու պահից սկսած երեխան ամենօրյա շփման մեջ է մտնում այն իրականության հետ, որում ապրում է: Առանց միջավայրի ազդեցության չի ձևավորվի երեխայի հոդաբաշխ խոսքը, մտածողությունը, ուղղահայաց կեցվածքը, այդ ամեը, ինչպես ասվեց, շրջապատի ճանաչողության արդյունք: Մանկական հասակում կենդանական միջավայր ընկած մաուգլի երեխաների վարքի ուսումնասիրությունը արդեն իսկ վկայում է, որ այդ երեխաների վերը նշված մարդկային հատկանիշները չեն զարգանում, ընդունակությունների զարգացումն արգելակվում է : Մարդկային միջավայրում էլ շատ քիչ փոփոխություն է կրում նրանց հոգեկանը: Թեև նրանք եղել են սովորական երեխաներ և ինչպես բոլորը, օժտված են եղել բանական էակին հատուկ ֆիզիոլոգիական բոլոր նախադրյալներով:

Սոցիալական միջավայրը (մեգա, մակրո, մեզո, գործոն կամ միջավայր) Մակրոմիջավայրը հասարակական կյանքն է ամբողջությամբ վերցրած, տվյալ հասարակությանը հատուկ սոցիալ-քաղաքական կարգը, քաղաքական, մշկութային կրոնական, տնտեսական գործառույթները և դրանց ազդեցությունը հասարակական , հետևաբար նաև անհատի գիտակցության վրա: Արդի շրջանում անհատն առաջնորդվում է ժողովրդավարական արժեքներով և հումանիստական գաղափարներով, որով ավելի լիարժեք պայմաններ է ստեղծվում մարդու իրավունքների, ազատությունների ստեղծագործնական նախաձեռնողական ներուժի զարգացման համար: Այս պայմաններու էլ կան ժողովուրդներ և անհատներ, որոնց սոցիալականացումը, զարգացումը, լիարժեք չի ընթանում պատճառներից կարևորը աշխարհագրական միջավայրն է, այսինքն, այն տարածքը, որը գտնվում է երկրագնդի որոշակի միջօրեականների վրա, և առանձնահատուկ է իր բնությամբ, բուսական և կենդանական աշխարհով, գեոմագիսական դաշտի և սեյսմիկ ակտիվությամբ, էկոլոգիական պայմաններով և այլն, որն էլ անշուշտ իր ազդեցությունը թողնում է տվյալ բնակավայրում ապրող ժողովրդի կենսակերպի ու հոգեկերտվածքի վրա: Ծանր պայմանները ավելի են նպաստում ժողովրդի մտավոր զարգացմանը, սակայն այդ ազգերը, որ հեռու են գտնվում քաղաքակրթության կենտրոններից և հոգեմտավոր զարգացմանը նպաստող աղբյուրներից (էսկիմոսներ, չուկչիներ, անապատի բնակիչներ ,

աֆրիկյան ջունգլիների բնիկներ և այլք) բավականաչափ չեն զարգանում, մնում են թերարժեք վիճակում:Սոցիալական միջավայրի ենթահամակարգերից են ընտանիքը (միկրոգործոն), կրթադաստիարակչական հաստատությունները՝ մանկապարտեզ, դպրոց, քոլեջ, արտադպրոցական հիմնարկ և այլն: Այս բոլորի ազդեցությունը երեխան, մարդը մշտապես կրում է իր վրա: Որքան բազմակողմանի է շփումը միջավայրի հետ (ծնողներ, ընկերներ, հարազատներ և այլք), այնքան ավելի լիարժեք ու արագ է ընթանում երեխայի զարգացումը: Միջավայրից երեխան վերցնում է գիտելիքներ, կարողություններ, պատկերացումներ օբյեկտիվ իրականության մասին, ճաշակ, հոգևոր հարստություն, վարքի նորմեր: Որքան ակտիվորեն է երեխան ներգրավվում հոգևոր շփման ոլորտ, այնքան ավելի է հարտանում նրա կենսափորձը, ներաշխարհի բովանդակությունը: Երեխան միջավայրի ազդեցության պասիվ կրողը չէ, նա սոսկ օբյեկտ չէ, երեխան ավելի շուտ սուբյեկտ է, որը ի «եսի» տեսանկյունից դիտարկում է շրջապատը, երևույթները, մարդկանց , վերցնում է այն, ինչը համապատասխանում է իր պահանջմունքներին ու հակումներին, այն ինչ նչա էությանը մոտ չէ, նա մերժում է գաղտնի կամ բացահայտ: Երեխաներ էլ կան, որոնք միջավայրի բացասական, մերժելի գործոններից են ազդվում, այդ միջավայրում, ինչպես ասում են, իրենց զգում են ինչպես ձուկը՝ ջրում:

Հայտնի է, որ լավ կենսապայմանները դեռևս լրիվ երաշխիք չեն երեխայի ճիշտ, դրական առումով ձևավորման համար: Նյութական բարենպաստ պայմանները՝ հարմարավետ բնակարան, հարուստ գրադարան, համակարգիչ, ձայնարկիչ, կիրթ ծնողների համագործակցության պատրաստակամություն և այկն կարդ են նշանակություն չունենալ երեխայի հոգևոր աճի ու զարգացման համար, եթե նա ձգտում կամ հակում չի դրսևորում օգտվվելու դրանցից: Մինչդեռ ընդհակառակը՝ ծանր մանկությունը,կենսական անբարենպաստ պայմանները չեն խոչընդոտել այնպիսի անհատների հոգևոր աճին ու զարգացմանը, ինչպիսիք են՝ Ալ.Ծատուրյանը, Հ.Թումանյանը, Ջեկ Լոնդոնը: Հատկապես, ար արժանիքներին՝ ժառանգականությանը միայն, թե միջավայրին, հանգամանքներին տալ նախապատվությունը, միանշանակ պատասխանելը դժվար , հարցեր են , որոնց լուծմանը պետք է զգուշությամբ մոտենալ, ծայրահեղությունն այս հարցերի լուսաբանման հարցում վատ խորհրդատու է: Ճիշտ են արդյոք (Մ.Մոնտեսորին և այլք) , որոնք ելնելով մարդու և կենդանու վարքի ուսումնասիրության արդյունքներից եզրակացնում են, որ բնությունից մարդը չար, ագահ և ագրեսիվ է ծնվում, որ դա այդպես չէ, հաստատում է նաև այն փաստը, որ շատ աֆրիկյան բնիկների խոսվածքում նույնիսկ ոչ մի վատ, չար արտահայտություն, հայհոյանք չկար մինչև քաղաքակիրթ մարդկանց հայտնվելը կուսական բնության զավակների ներփակ միջավայր: Կյանքի պայմանները, դաստիարակությունը ըս շատ բան կարող են փոխել մարդու մեջ: Մենք հակված չենք ոչ ժխտելու և ոչ էլ բացարձակացնելու ոչ միջավայրի և ոչ էլ ժառանգական գործոնի դերը: Ճիշտ է՝ պտուղը

ծառից հեռու չի ընկնում կամ ծառից է հայտնի պտուղը, բայց պատվաստի դերն էլ չպետք է ժխտել: Վայրի խնձորենուն պատվաստելով կարելի է ստիպել, որ հյութալի պտուղ տա, բայց կաղնին, որքան էլ պատվաստեք, միևնույն է պտուղ չի տա (Վ.Բելինսկի):

Գլուխ 3 Ընտանիքի և դպրոցի դերը անձի ձևավորման գործում

3.1 Ընտանիքի դերը անձի ձևավորման գործում

Ընտանիքը երեխային շրջապատող ամենամերձավոր միջավայրն է (ընտանիք-ընդ տանիք, նշ. Է նույն տանիքի տակ, մերձավորների համակեցություն): Կյանքի հետ երեխայի շփումն առաջին հերթին ընթանում է ընտանիքում, որը սոսկ շփման ոլորտ չէ, դա այն մշտական էներգիայի աղբյուրն է, որից սիրո, ջերմության եռանդուժ է ստանում փոքրիկը, հակառակ վիճակը սիրազրկությունն է, բժշկա-հոգեբանական բառարանում՝ դապրիվացիա, երևույթ, որը խիստ բացասաբար է ազդում երեխայի թե ֆիզիկական-բնախոսական աճի և թե հոգեկան զարգացման վրա: Մայրը երեխայի առաջին դաստիարակն է, լավ է, երբ ծնողական դերերը բաշխվում են հոր և մոր միջև տարբեր սեռերի երեխաներ դաստիարակելիս:
Երեխան պետք է աճի ու մեծանա անկոնֆլիկտ ընտանիքում, մարդկային առողջ ներընտանեկան շփման ոլորտում: Ընտանիք, ուր իշխում են համերաշխությունը, ավանդությները, ծեսերը, խաղերը, առողջ կենսակերպը, հարմարավետությունը, մաքրությունը, կարգուկանոնը: Դաստիարակում են նաև բնակարանի ձևավորումը, կահույքը, տիրող ճաշակը: Երեխան պետք է մեծանա նաև այլասեր, կարեկից մարդկային միջավայրում և ինչպես Գր. Տաթևացին էր ասում, հեռու մնա յոթ մահացու մեղքերից (հպրտություն (նկատի ուներ գոռոզամտությունը), ագահություն, նախանձ, ցասում, որկրամոլություն,ծուլություն, անառակություն), որոնք կարող են շեղել մարդուն ճշմարիտ ճանապարհից և մեռցնել նրա մեջ վեհ բարոյականությունը:

3.2 Դպրոցի դերը անձի ձևավորման գործում

Երեխայի զարգացմանը նպաստող սոցիալական միջավայրի (միկրոմիջավայրի) մյուս օղակը դպրոցն է, դասարանը, որը ընտանիքից հետո երկրորդ կարևոր շփման գոտին է ,դպրոցում լայնանում է երեխայի հաղորդակցության ոլորտը, սոցիալական հարաբերությունների շրջանակը: Այստեղ երեխան ձեռք է բերում համակարգված գիտելիքներ, կարողություններ, տեղեկատվություն: Այժմ շատ ավելի կարևորվում է սովորողների հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացումը:
Արդի դպրոցը և ընտանիքը որպես լայն հասարակական միջավայրի կարևորագույն սոցիալ-մանկավարժական ինստիտուտներ, իրենց վրա կրում են բոլոր այ հակասական երևույթների ազդեցությունը, ինչը,որ ի հայտ է եկել մեզանում շուկայական հարաբերությունների ձևավորման շրջանում: Կյանքն արմատապես փոխվում է: Աստիճանաբար փոփոխվում է մարկանց ապրելակերպը, հասարակական գիտակցությունը, ամբողջատիրական գաղափարական կաղապարներըդանդաղորեն

հաղթահարվում են: Սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ազգաբնակչության միգրացիան, դեմոգրաֆիական իրավիճակը, հասարակության բևեռացումը և այլն ազդում ենհասունացող սերնդի հոգեմտավոր, բարոյական զարգացման, սոցիալականացման ողջ գործընթացի վրա և դրանց համարժեք: Ասված է «Մարդը մշտապես միայն այն է, ինչ նրանից ստեղծում է հասարակությունը»: Հասունացող սերնդի սոցիալականացումը և լայն սոցիալական իմաստով դաստիարակությունը տեղի է ունենում հասարակական ողջ կացութաձևի, դրան համապատասխան վերնաշենքային երևույթների, հասարակական դաստիարակչական հիմնարկների, մշակութային օջախների, տեղեկատվական զանգվածային միջոցների, արվեստի, գրականության և այլն ներգործությունների շնորհիվ, որոնց կազմակերպած նպատակաուղղված ազդեցության արդյունքում նոր սերնդի մեջ մշակվում են վարքի հասարակության համար ընդունելի նորմաներ, բարոյաէթիկական որակներ, արժեքներ, ճաշակ և այլն

Գլուխ 4 Դաստիարակության դերը անձնավորության ձևավորման ու զարգացման գործում

Անձնավորության ձևավորման ու զարգացման և ձևավորման ընդհանուր համատեքստում դաստիարակության գործընթացին նպաստելն է այլ սոցիալական գործոնների հետ միասին: Դաստիարակությունը լայն առումով, ինչպես ասվեց, ներառում է իր մեջ ուսուցման, կրթության և ավելի նեղ մանկավարժական իմաստով անձի ձևավորման ու դաստիարակոըթյան նպատակաուղղված գործընթացը: Դաստիարակության սահմանումներից առավել ընդունելի պետք է համարել այն սահմանումը, որում շեշտադրվում է ուսուցչի կամ դաստիարակի ղեկավարող ուղղություն տվող դերը մանկավարժական գործընթացում: Ուրեմն, դաստիարակությունը կարելի է սահմանել որպես սանի անձնավորության ձևավորման գործընթացի նպատակաուղղված ղեկավարում հատուկ կազմակերպված պայմաններում: Որպես ասվածի հինավորում է ծառայում Լ>Ս. Վիգոտսկու հետևյալ միտքը, «Դաստիարակության գործընթացի հիմքում պետք է ընկած լինի սանի անձնական գործեությունը և դաստիարակության ողջ արվեստը պետք է միայն հանգի նրան, որ կարգավորի եկավարի ու ուղղվածություն տա այդ գործնեությունը»: Ի տարբերություն անձի զարգացման վրա ազդող մյուս գործոնների, դաստիարակությունը (համարժեք է կրթությանը) երեխաների կյանքի և ուսումնական գործնեության հատուկ կազմակերպված, նպատակաուղղված ու ծրագրված գործընթացն է, նրանց մտագործնեության համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ հաղորդելու և վարքի հասարակության համար ընդունելի նորմաներ, բարոյաէթնիկական որակներ ձևավորելու նպատակով: Դաստիարակույունը նպատակաուղղված գործընթաց է, նրա մյուս կարևոր առանձնահատկությունն էլ այն է, ար այն իրականացնում են այդ գործին կոչված և հատուկ դրա համար

նախապատրաստված մարդիկ՝ մանկավարժները: Անձի ձևավորման գործընթացում որպես սոցիալական գործոն դաստիարակությունը ամենակարող չէ, այն պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ նախ բնական նախադրյալներով և ապա միջավայրի ներգործությամբ:

Դաստիարակությամբ չեն կարող փոխվել ժառանգած ֆիզիկական տվյալները, նյարդային գործնեության տեսակը:

Սակայն գիտականորեն հիմնավորված դաստիարակչական ներգործությունների և հատուկ կազմակերպված պայմանների շնորհիվ կարելի է հասնել որոշակի արդյունքի, եթե՝

- Հաշվի առնվեն երեխայի նյարդային համակարգի գործնեության առանձնահատկությունները
- Ապահովվի նրա բոլոր օրգանների ճիշտ զարգացումը:
- Երեխայի հնարավորությունները, ներուժը հաշվի առնելով ընդգրկել նրան համապատասխան գործնեության մեջ:
- Կատարել ճիշտ և հիմնավոր ախտորոշում բացահայտելու համար բնածին օճտվածությունը, ընդունակությունը, որևէ ուղղությամբ և նոր միայն պայմաններ ստեղծել դրանց զարգացման համար:

Նշված պայմանները ապահովելու դեպքում անհատական նախադրյալները կարող են վարածվել ընդունակությունների: Դաստիարակությունը (ուսուցումը) կարող է որոշակի հատկանիշների զարգացում ապահովել միայն հենվելով բնական, կենսաբանական նախադրյալների վրա:

Առանց հասարակական միջավայրում գործնեության և համապատասխան դաստիարակության չի կարող լինել բնականոն զարգացում, դաստիարակության և զանգացման բարդ, դիալեկտիկական փոխազդեցության գործընթացում դաստիարակությունը (ուսուցումը, կրթությունը) գնում է առջևից, իր հետևից տանելով երեխայի զարգացումը: Ռուս ականավոր հոգեբան-մանկավարժագետ Վ.Ս Վիգոտսկին «հիմնավորել է այն օրինաչաձությունը, համաձայն որի ուսուցման նպատակը և մեթոդները պետք է համապատասխանեն ոչ միայն արդեն երեխայի կողմից ձեռք բերված զարգացման մակարդակին, այլև ապահովեն «նրա զարգացցման մերձակա գոտին»՝ առանձնացնում է մտավոր զարգացման երկու մակարդակ `«հրատապ զարգացման մակարդակ» «մերձակա զարգացման գոտի»: Առաջին մակարդակում երեխան ինքնուրույն է կատարում առաջադրանքները, իսկ երկրորդ դեպքում նա չի կարողանում առաջադրանքը հաղթահարել (ավելի բարդացած պահանջները) այդ պատճառով էլ հարցը լուծում է մեծերի օգնությամբ: Միայն այն ուսուցումն է լավ, որը գնում է զարգացման առջևից:

4.1 Գործնեության և ակտիվության դերը անհատի զարգացման, սոցիալականացման գործընթացում:

Անհատի զարգացումը շատ գործոններով է պայմանավորված: Դրանցից կարևորը գործնեությունն է: Մանկավարժական հոգեբանությունը հաստատում է, որ երեխայի զարգացումընրա գործնեության տարբեր տեսակներով պայմանավորված փոփոխությունների բարդ ու երկարատև գործընթաց է:

Հիրավի, ուղիղ կապ գոյություն ունիմարդու զարգացման արդյունքների և ակտիվ գործենության բնույթով, ապրելակերպով և մի շշարք այլ գործոններով: Գործնեությունը համալիր ձևով է ազդում անձի ձևավորման գործընթացի վրա, նպաստելով,, նպաստելով և հոգեկան գործընթացների ու որակների ձևավորմանն ու համակողմանի զարգամանը և աշխարհայացքի ու կենսափորձի հարստացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, եթե ընդանրացնենք մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ դիտարկումները:

- Անձի կրթության, դաստիարակության, լիարժեքության համար պարտադիր պայման է իրենց ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը ինչպես ուսումնական հասատատություններում այնպես էլ արտադասարանական, արտադպրոցական միջոցառումների և էքսկուրսիաների շրջանակներով:
- Ուստի մասնագիտական որակները և նորարարական գափարների ներդրումը դասին մեծապես կօգնի աշակերտին հանդես գալ որպես նախաձեռնող ու ստեղծագործող:
- Երեխայի հոգին ըստ Ջոն Լոկի անգրել տախտակ է (tabula rasa), երեխայի հետագա բախտը ըստ անգլիացի փիլիսոփա-մանկավարժի կախված կլինի նրանից թե ինչ կգրվի այդ տախտակի վրա, ինչպես կդաստիարակվի երեխան:

Օգտագործված գրականության ցանկ

1.Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ
2. Գենետիկան և մարդու առողջությունը Է.Ս. Գևորգյան, Գ.Գ. Սևոյան